ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2023 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ N 162 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2490014 վկայական), տեղական նշանակության հուշարձան հանդիսացող (ցուցիչ՝ 4.933) Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց N 162 հասցեի 2462,79 (երկու հազար չորս հարյուր վաթսուներկու ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-745-029-001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.636861 (զրո ամբողջ վեց հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր վաթսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի՝ 2022 թվականի հունիսի 24-ի N 06242215 անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, սահմանել աճուրդի մեկնարկային գին՝ 1 100 000 000 (մեկ միլիարդ մեկ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (15)	Դեմ (6)	Ձեռնպահ (3)
Վ.Սամսոնյան	Վ.Հակոբյան	Ե.Խանամիրյան
Գ.Մելիքյան	Կ.Սոսյան	Ն.Միրզոյան
Մ.Սահակյան	Ս.Ադամյան	Հ.Մարգարյան
Տ.Հովհաննիսյան	Գ.Մանուկյան	
Ն.Պողոսյան	Կ.Մալխասյան	
Գ.Պասկևիչյան	Կ.Ասատրյան	
Խ.Վարաժյան		
Ս.Հովհաննիսյան		
Հ.Ասատրյան		
Ս.Խուբեսարյան		
Վ.Մկրտչյան		
Ա.Բեյբուտյան		
Հ.Նիկողոսյան		